

շրջանակներին, ուստի ստորև մեջ ենք բերում դրա հայերեն թարգմանությունը ամբողջությամբ և վավերագրի նմանահանությունն ու պարսկերեն բնագիրը.

«Աշխարհը հպատակեցնող սուլն հրամանագիրը հրապարակվեց այն մասին, որ Բարգուշատի և Ղափանի հաֆիմ, էմիրության և իշխանության ապաստան և տնօրեն, հաղթական բանակի շարխշիբաշի¹⁶ Ֆարհ-Ալի սուլթանը արհայական բարեխնամությամբ փառավորվելով թող իմանա, որ իր զեկուցագրի մասին, որ նա ներկայացրել էր բարձրաստիճան սարդար, Ազերբայջանի բեկլարբեկին այլ խնդիրների շարքին, խնդրելով նաև իրեն էյալթության տիտղոս շնորհել և խալաջ Ամիր-անբարիի համայնֆից և Բարգուշատի հայերից գանձվող հարկերն (մուրավաջեհաթ) ու Ղափանքում գտնվող Չանգիան, Դարբալա, Փիրի-դարբագ և Մուխարի կոչվող գյուղերը, ինչպես նաև խալխեսները, եկամուտների պակասորդի դիմաց, տրվեն իրեն,—բարձրաստիճան բեկլարբեկի կողմից, բարձրագույն սեմում զեկուցվեց:

Նորին էմիրության և իշխանության ապավենի նկատմամբ եղած արհայական անսպառ գրությանը, վերոհիշյալ խալաջներից (ցեղեր) և հայերից գանձվող հարկերը (մուրավաջեհաթ) և հիշյալ չորս գյուղերը, եկամուտների պակասը լրացնելու համար շնորհեցինք նրան: Ինչպես նաև խալխես վայրերը, որոնք նախապես տրված էին բյուրաթի (արհունի արհեստանոցներ) բարձրաստիճան նազիրին, նրան հանձնեցինք որպեսզի հիշյալ խալխես վայրերի հարկերը (վշունաթ) գանձելով ուղարկի պետական գանձարան: Որից հետո նա պետք է իր մոտ հավաքի այդ կողմերի բոլոր զինված ուժերն ու կովի ելած ամբոխը (իշարի) և անմիջապես գնա Օրդուբադ գյուղաֆաղաքը և Նախշևանի ու Մարանդի բարձրաստիճան հաֆիմների հետ միասին, որոնց նույնպես կարգադրված է գալ նշված գյուղաֆաղաքը, գան Չուխուր-Սադի բարձրաստիճան բեկլարբեկի Մանսուր-խանի մոտ և վերջինիս հետ խորհրդակցելով, միացյալ ուժերով հայերին, անարգ օսմանցիներին և ֆրդերին վանեն ու ոչնչացնեն և հիշյալ գյուղաֆաղաքը նրանց ձեռքից ետ վերցնեն:

Անհրաժեշտ է նաև, որ նա հավաքի, սիրաշահի և հուսադրի Ջիվանշիր և Քաբիրլու ցեղերին և սրտապնդելով, անհրաժեշտ հոգատարությունը դրսևարի նրանց նկատմամբ, և թող իրեն այս պարտականություններից ազատ չհամարի: Քանզի մեր արհայական մեծությունը հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջում, և թող իմանա, որ հայերին սաստելու գործում նրան ագատություն է տրված. իրերի լավ կամ վատ ընթացքի համար մենք նրան եեք պատասխանատու ճանաչում: Անհրաժեշտ է, որպեսզի բոլորը միատեղ, նվիրյալ ծառայություն մատուցեն և այս գործում շքերանան:

Թող ձերը էմիրության և իշխանության ապավենը բոլոր հարցերում իր ծառայություններն ու նվիրվածությունը դրսևարի, որպեսզի, աստձով, նրան խանության և էյալթության տիտղոսներ շնորհենք և այլ պարգևներով ու բարձրացումներով փառավորենք, և թող արհայական հոգատարությամբ մխիթարված լինի:

Գրվեց 1136 թ. սրբազան զինաջա ամսին (1724 թ. օգ. 21-սեպ. 19)»:

Հրովարտակի վերի մասում շահ Թահմասպի հիշքը. 1135 թ. կնիքն է, ինչ որ հաստատում է վավերագրի բնագիր լինելը: Իսկ թե ինչ ճանապարհով անձամբ Ֆարհ-Ալի սուլթանին հղված հրովարտակի բնագիրը ի վերջո հասել է Թիֆլիս և հանգրվանել պետական արխիվում, այդ մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Թեև հարցն ինքնին հետաքրքիր է և կարոտ առանձին ուսումնասիրության: Թերևս այն կարող են պարզել միայն Վրաստանի արխիվային ֆոնդերի պատմությամբ զբաղվող մասնագետները:

Պետք է ենթադրել, սակայն, որ Ֆարհ-Ալի սուլթանի մոտ գտնվող այս կարևոր փաստաթուղթը, որևէ ձևով նրա հակառակորդների ձեռքն անցնելուց